



Ե Ս Ս Ի Ր Ե Ց Ի

Սիրեցի քեզ, աշխարհ, յաւիտեանս կան կեանքի հոյակապ ապացոյց: Որքան հրաշալի ես և անոյշ, և ինչպիսի՜ կարգապահութեամբ կը շարունակես գոյութիւնդ: Ինչպէ՞ս ծնրադիր չողօթիմ Արարչին՝ հոգւոյս փրկութեան համար:

Սիրեցի կեանքը որ քեզմէ կը բղխի, գարունդ երբ կու գայ, ծառերդ որ կանաչ կը քացուին հարսերու նման և իրենց տերեւները կ'օրօրեն անոյշ հովուին: Կը խորհիմ թէ մենք ալ անշուշտ պիտի քացուինք և նորոգուինք երբ մեր ձմեռէն վերջ մեր գարունը գայ:

Սիրեցի վայրի և անուշահոտ ծաղիկներդ, որ բարկութիւն չեն գիտեր և մեր հաճոյքին համար միայն կ'ապրին:

Սիրեցի թռչնիկները երկնից, որ մէջն առաւ աշխարհը կ'աւետեն մեզի: Սիրեցի երկնակամարդ, իր մարգարիտ աստղերով. արեւդ, որ մեզ կեանք կու տայ: Սիրեցի փայլակները և որոտումները, և աղօթեցի որ երկնային զօրութիւնները չբարկանան մեզի:

Սիրեցի լեռներդ և ձորերդ. լեռներդ որ մեզ կը մօտեցնեն Աստուծոյ, ձորերդ որ մեզ խոնարհութիւն կը սորվեցնեն:

Սիրեցի գետերդ և ծովերդ, գետերդ որ անոյշ ջուրերը, ծովերդ կատաղի ալիքները:

Ամէն տեղ կեանք տեսայ ու կը շարունակեմ տեսնել: Աշխարհի մէջ մահ չկայ: Թող չտեսանք գերեզմանէն, որ մեզ նոր կեանքի կը տանի:

Սիրեցի կեանքը իր բոլոր ձևերուն մէջ. կեանքը հզոր և փոքր կենդանիներու. կեանքը բոյսերու, գետերու և ծառերու. կեանքը երբեմն խաղաղ ու երբեմն ալիքոծ ծովերու. կեանքը լեռներու և հովիտներու. կեանքը արեւուն, լուսնին

Ա Ն Կ Ա Պ Խ Ո Շ Ե Ր

Երբեմն, բեկումի ու ծայրայեղ յուսալքման րոպէներուն, մտքիս լուսանցքին վրայ կու գայ ուրուանալ գաղափարը անձնասպանութեան:

Բայց չ'ուշանոր պահը երբ կը յաջողիմ դուրս չլքեմ զայն մտածողութեանս պարունակէն, երբ կը մտաբերեմ անհուն կարուանը սէրերուս, որոնք, ամմոր ու անաղօտ, կը տողանցեն մտքիս առջեւ, իւրաքանչիւրը ջանալով քիչ մը աւելի ամուր կապել զիս այս կեանքին ու իր ունայնութիւններուն:

Վասնզի անձնասպան կ'ըլլան անոնք միայն՝ որոնք կորուսած են ամէն յոյս: Ու սէրը աղբիւրն է յոյսի: Սիրող անհատն է ի կրնար խոյս տալ յոյսը: Ու, փոխադարձաբար, յուսալից անհատի մը սիրաւ վառարան է սիրոյ:

Մէկ չէ սիրոյս առարկան բարեալատաբար: Ու մակերեսային, ծանծաղ չննիմ սէրերը, ինչպէս չեն եղած երբեք անցնալին: Բոքը ու անշէջ եղած են անոնք, ինչ փոյթ թէ երբեմն սիրտս այրելու սպառնալիքով ալ սպառաղէն:

Կը սիրեմ մայր բնութիւնը, ու իր անդորր ծոցին մէջ անցընելիք մէկ ժամուս հաճոյքը չեմ փոխեր բարեկամի մը ներկայութեամբ անցուած ժամու մը վայելքին հետ:

Կը սիրեմ չորս եղանակները տարւոյն: Գարունը՝ իր կանաչութեան, իր յորդառաւ կենսունակութեան, վարդերուն ու ծաղիկներուն, ու նաեւ իր խաղաղ ու մերթ խենթ անձրևներուն ալ համար: Ամառը՝ իր բաղձաղբի պտուղներուն ու պտոյտներուն ալ համար: Իր երկնքին պայծառութեան ու լոյսին առա-

ւ աստղերուն. կեանքը որ շարունակ կեանք կը ծնի:

Սիրեցի ես քեզ, կեանք յաւիտեանս կան:

Կ. ՄԻՀՐԱՆԵԱՆ

տուժեանք համար: Աշունը՝ իր մեղմ ու հիւանդոտ զեփուհին համար, իր օգին բարեխառնութեան ու միբղերուն քաղցրութեան համար: Ու վերջապէս ձմեռը՝ իր ձիւնին ու անձրեւին համար, իր գիշերներուն երկարութեան ու քունին քաղցրութեան համար: Ու նաեւ, գիրքերուն ու գրական աշխատանքներուն հետ ըլլալու աւելի լայն առիթներ ընձեռելուն համար:

Կը սիրեմ երգն ու երաժշտութիւնը — դասականն ու ժողովրդականը հաւասարապէս —, հանգէսն ու զեղարուեստը: Տէրը, փառք իրեն, պարզեւած է զիս արուեստի գործերը ըմբռնելուն, անունց՝ մով լիսնալու ու ոգեզդիւնելու, ու աշխարհի տաղանդներէն բաժնուելու, երանութեանց ոլորտները սաւառնելու սուր ու անմաշ զգայարանք:

Դուք ալ սիրեցէք այս բոլորը: Սիրեցէք շատ բաներ ու սիրեցէք խորունկ սիրով, ու այն ատեն է միայն որ պիտի զգաք դուք ձեզ իրջանիկ, աշխարհներ նուաճած ձերանափառ կայսրերէն ալ աւելի:

Սիրեցէք մարդերը բոլոր, նոյնիսկ ձեր թշնամիները: Սիրեցէք աղօթք ու աշխատանք, գիրք ու միբղ, թերթ ու հանդէս (զոյգ իր իմաստներով), երգ ու պոստալ, ու պիտի համոզուիք թէ կ'արժէ ապրիլ Վարդուէի հովիտը կոչուած այս կեանքը երկարօրէն և վառիչօրէն:

Սիրեցէք մեր շարականն ու աղօթքը, մեր լեզուն ու մշակոյթը, մեր հայրենի երկիրն ու աւանդութիւնները, ու մեր վարդաւանքը ու յոյժը եղող մեր սիրտստեն մանուկներն ու պատանիները: Ազգային արդար հպարտութիւն մը թող ունեցնէ ձեր սրտերը, ու պայծառ օրերու հուսալքէն բխող արի լաւատեսութիւն մը թող ձեզ ընէ միշտ խելալալաւ ու տեսլապաշտ անհատներ, ապագայի լուսաւոր հեռանկարով այժմէն իսկ արթննալու քւ սըրբազան նպատակի մը իրադարձման ձգտելուն զոհուող խանդը անբաժան ձեր սրտէն:

Սիրեցէք, սիրեցէք միայն, մարդ ու անասուն, ծառ ու ծաղիկ, այգի ու մայրամուտ, այգի ու պարտէզ, գաշտ ու քնքառ, քանդակ ու նկար:

Սիրեցէք երիտասարդութիւնը՝ իրմէ անբաժան խանդին ու թարմութեան հասմար: Սիրեցէք ծերութիւնը՝ իր հասունութեան ու խոհականութեանը համար:

Յղէք պարկիշտ ու զթառառ, համեստ ու ժպտադէմ, ու ձեր այս առաքելիւնութիւնները իբրեւ վառան պիտի պաշտպանեն ձեզ կեանքի նեղ հարուածներէն ու իբրեւ լուսափառ փարոս ձեզ ապահով պիտի անցնեն անոր տարատառէն դէպի արփուէտ նաւահանգիստը երկնային երանութեան:

x

Իսկապէս արգանատիկ են ծերունիները, յապաղած այդ հիւրերը մեր մոլորակին, հակառակ իրենց հինգ-դուրս մարդու համագումարուն ու արտայայտած յետադիմական գաղափարներուն: Հակառակ իրենց յաճախ անժպիտ ու կեանքէն ձանձրացած մարդու անաղորդ բնավարութեան կամ ապագամ գնդամտութեան: Մահուան համար հասունցած, մահուան դաժան շուքը իրենց դէմքերուն, աւելի քան քաղցր ու ներքիկ են իրենց փառքիկ մեղանշունները, կամշոտ ու ահաճ արտաքինները: Ու ճիշդ ինչպէս մենք յաճախ կը ձանձրանանք երբ մեր հիւրասիրած անձը յամառի երկարօրէն մնալ մեր տան մէջ, այնպէս ալ կարծես մայր երկիրը ճատրբեր աչքով՝ գիտել կը օգտի իրենց դոյութիւնը իր երեսին երկար ատեն պաշտօն մարդերը: Ու այլապէս վիշտերով ու տառապանքներով զգացնել կու տայ զոգոցն թէ իբրեւ հիւրեր իրենց իրաւունքէն դուրս է այլեւս յապաղել այստեղ: Բայց իցի՛ն թէ այդ դառնութիւնները կարենալին բան մը զեղչել իրենց այս կեանքին ու աշխարհին հանդէպ սնուցած սէրէն: Եւ յանգնելու համար զիրենք մահուան գաղափարին հետ, որուն մօտիկութեան զգացումը ստէպ նոյն համեմատութեամբ կ'աճեցնէ իրենցմէ ներս ստակումը նոյն այդ մահէն, ու բնականաբար աւելի սերտօրէն կը կապէ զանոնք իրենցմէ օրըստ օրէ խոյժ առողջ կեանքին: Մանկութիւնէ ի վեր, գութի զւարդաշաքարի զգացումներով է որ գիտած եմ ձերերը, որոնք միշտ ալ միաքան տա

բաժնի թուով լուծված եղող ծաղկին, արանի բնութեան մէջ ո՛չ մէկ ոյժ կարող է իր նախկին բայրի ու թարմութիւնը վերադարձնել կամ զայն արգիլել վերջնական փոշիացումէ:

X

Կեսանքի մէջ մեծ ուրախութիւնները ընդհանրապէս մեծ խռովքներէ, հոգեկան խոր տաղանալանքէ վերջ է որ կու գան: Առանց այդ խռովքներուն ու տաղանալանքերուն, ու անոնց յաջորդող ու աննցմով պայտմանաւ որ յաղթանակներուն կեանքը պիտի դառնար անհրահայելի-որէն միօրինակ ու տաղանալանք, ու անոր պատասաւն մեզի հրաժցուած ժապաւնը, որքան ալ հաճելի ու գեղեցիկ, շուտով պիտի կորսնցնէր իր հմայքն ու քաղցրութիւնը: Պայքարէ զուրկ կեանք մը մահ-աւան կը նայի: Որքան առաւել պիտի ըլլայ մեր ուրախութիւնը, օրինակի համար, երբ ընտրութենէ մը յաղթական դուրս գալ վիճակուի մեզի, երբ նոյն այդ ընտրութեան մեր թեկնածութիւնը դրած պահուն ոչնչանալէ ազատ էր յոյսը մեր յաջողութեան: Մինչդեռ այդ յաղթանակը շատ քան պիտի կորսնցնէր իր քաղցրութենէն, երբ առաջնը գայն շատ ըլլալու գիտակցութեամբ, յաջողութեան հարիւր առ հարիւր վստահութեամբ դրած ըլլայինք մեր թեկնածութիւնը: Ու այդ անվստահութիւնը, ընտրութեանց մտահոգան հետ տեղը ու մեզ տեսարար խռովայող վիճակի մէջ պահող, որքան մեծ համեմատութիւններուն հասնի մեր ներքինին, նոյնքան անոյշ կը թուի մեզի պտուղը յաղթանակին, թող թէ պարտութեան պարագային ալ մեզի խնայած պիտի ըլլայ այն խոր յուսադրեցումը, որ կրնայ ճակատադրական հետեւանքներ ունենալ մեզի համար, և որուն ենթակայն են միտմիտ լուսատեսութեան մը կոյր բախտին արձնուած թեթեամիտները:

x

Տարօրինակ է որ, երբ մտանոնք
ուրիշ շրջաններէ տեւի բարիք ու հան-
գրասութիւն խոստացող կեանքի որոշ

Զբաղանկներու առարարին, տարբեր զգայու-
թիւններ դռն միջամտել, մեղմելու համար
կարճատեւ վայելքի պահէ մը հաջ տախտակ
ու բազմահոգ առօրեային վերադառնալու
տրամուծիւնը: Օրինակ, որձակուրդի
միջինընդ ապրտուն, վայելքի սահմանադէ-
տայը Զբաղանկի մեր ախորժողութիւնը խաւ-
գարող, մեր սուղ գնեմած ժամերսն ու-
րախտութիւնը հղծել փորձող քաղաքային
ոյժերուն, ազդակներուն առկայութիւնը,
մեր օրերը բարիքով ու խնդունքիմար
լեցնելուն վարանքն ու կասկածը տուող
միջին:

Ուրիշ օրինակ մը: Այս օրերուն, ուր
կելաքական հոսանքի խանգարումները
ա՛յնքան յաճախեղէպ են դարձած, ինչ-
պէս կարելի է որ մեր ուսումնաթիւնը
ըլլայ ամբողջական՝ հետազոտելէն մին
հետաքրքրութիւնը շարժող յայտագիր մը
դիտելու տկերնաւորութեան: Միայն հար-
ցածը պիտի դալ մեր մտքին, թէ պիտի
ստուի՞ մեղի տնընթիջաբար պայելել
յայտագիրը: Մեր ուսումնաթիւնը այն
տաեան միայն կարող (կարո՞ւ) է ըլլալ ամ-
բողջական՝ երբ արդէն վերջ է գտած ու-
սումնաթիւ պահը (թաղանթն կամ ալ ինչ):

x

Ռեֆյամ անունին տակ թերթերէն ու ձայնասփիւռէն մեզի մատուցուած առեւտրակտն և այլ կարգի ծանուցումները միշտ ալ խրաչեցուցած են զիս: Կնդանի յուշարարներն են անոնք նիւթին տիրապետութեան, մերօրեայ կեանքին մէջ: Նիւթին, հալիւին, մեքենային ու մամուլային մեր Ստաք — և երբնմն իսկ միակ — ուղարկուած ու մատուցուածն եւս — արհաւիր զարծած ըլլալուն:

Բնուս չգարամանալ ուրիմն որ մեր օրերուն հոգեւոր ու բարոյական արժէքներ — արուեստի մարզին մէջ ալ իրենց վերապահուած անուրանալի դերով — նահանջի ճամբան բռնած են, նահանջ մը՝ որ ճակատագրական իր ազդեցութիւնը կը թաղանթէ ու կը բազմապատկէ ժամանակի թաւալումին հետ:

(Tour. 5)

Գ. ՃԱՐՏԱՐ